

*Քարոզարշավը հանգիստ ընթանում է. մրցակցությունը բավականին բարձր է.
Մուկույյանը՝ ՏԻՄ ընտրությունների մասին*

11/02/2019

Սկզբնաղբյուր՝

<https://armtimes.com/hy/article/154395>

Փետրվարի 17-ին Հայաստանի Հանրապետության 9՝ Տավուշի, Արագածոտնի, Արմավիրի, Արարատի, Լոռու, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Շիրակի եւ Կոտայքի մարզերում տեղի են ունենալու համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հերթական եւ արտահերթ ընտրություններ:

«Քարոզարշավը հանգիստ գնում է: Մրցակցությունը բավականին բարձր է», - այս մասին «Հայկական ժամանակ»-ի հետ զրույցում ասաց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Տիգրան Մուկույյանը՝ պատասխանելով մեր այն հարցին, թե ինչպե՞ս է ընթանում քարոզարշավը փետրվարի 17-ի ընտրություններից առաջ:

Մուկույյանը նշեց, որ մրցակցությունը բավականին բարձր է, որովհետեւ շատ թեկնածուներ են առաջադրվել. «Այս պահի դրությամբ ունեցել ենք ընդամենը մեկ ահազանգ՝ Վարդենիսում թեկնածուների կողմից պաստառներ փակցվելու հետ կապված է եղել: Անմիջապես հրավիրվել են բոլոր թեկնածուները, մեկ անգամ եւս պարզաբանվել են օրենսգրքի պահանջները, նորմալ ընթանում է, որեւէ արտառոց խնդիր, ահազանգ չկա», - ասաց ԿԸՀ նախագահը:

Մեր դիտարկմանը, թե այսօր Վարդենիսում բողոքի ակցիա է տեղի ունեցել եւ թեկնածուներից մեկի կողմնակիցները նշում էին, որ խտրական վերաբերմունք է դրսևորվել՝ մնացած թեկնածուներին թույլատրվել է պետական կառույցներում քարոզարշավ իրականացնել, իսկ իրենց թեկնածուին՝ ոչ, Մուկույյանն արձագանքեց. «Կփորձեմ ճշտել, թե դա ինչ է, բայց դա անհնար է: Իրենց մոտից է եղել հենց առաջին ահազանգը մի քանի օր առաջ՝ պաստառների հետ կապված: Մեկը մյուսի պաստառի վրա էր փակցրել իր պաստառը: Մենք բացատրեցինք, որ նորմալ չէ դա, պետք է հանգիստ քարոզարշավ անել՝ չխանգարելով եւ ապօրինի որեւէ բան չանելով»:

Մեր հարցին, թե ընդհանուր քանի՞ համայնքում են ընտրություններ լինելու եւ քանի՞ թեկնածու կա, Մուկույյանը պատասխանեց. «20 համայնքում տեղի են ունենալու համայնքի ղեկավարի ընտրությունները, 4 համայնքում ավագանու ընտրություններ են: Ավագանու ընտրություններ տեղի են ունենալու Մարգարա, Զրաշեն,

Գետահովիտ եւ Իջեւան համայնքներում: Համայնքի ղեկավարի ընդհանուր թեկնածուների թիվը 65-ն է, իսկ ավագանու անդամների թեկնածուների ընդհանուր թիվը 60 է: 1 թեկնածու ունենք միայն Տեղեր եւ Հայկական համայնքներում: 2 թեկնածու 8 համայնքում կա, 3 թեկնածու 3 համայնքում է, 2 համայնքում 4 թեկնածու է, 5 թեկնածու 3 համայնքում է, համայնքներից մեկում ունենք 7, մյուսում՝ 8 թեկնածու: Այսինքն, բավականին բարձր է մասնակցությունը»:

Մեր հարցին, թե ինչով է պայմանավորված, որ 1 թեկնածու կա 2 համայնքում, Մուկուչյանը պատասխանեց. «Օրինակ, Տեղեր համայնքում ընտրողների թիվը ընդամենը 165 է, Հայկավանում 1102: Չի բացառվում, որ 165 հոգանոց համայնքում 1 թեկնածու գտնելն է անգամ շատ դժվար: Օրինակ, Վարդաշեն համայնքում 414 ընտրողով 2 թեկնածու կա: Վարդենիսում 8 թեկնածու է: Աշոցքում 7 թեկնածու է: Ակունքում եւ Նալբանդյանում 5 թեկնածու», - ասաց Մուկուչյանը:

Նշենք, որ փետրվարի 17-ին համայնքի ղեկավարի ընտրություններ տեղի են ունենալու Արագածոտնի մարզի Տեղեր եւ Օհանավան համայնքներում, Արարատի մարզի Արեւաբույր, Ուրցաձոր եւ Վարդաշեն համայնքներում, Արմավիրի մարզի Հայկավան, Հովտամեջ, Նալբանդյան, Նոր Արմավիր եւ Վարդանաշեն համայնքներում, Գեղարքունիքի մարզի Ակունք եւ Վարդենիս համայնքներում, Լոռու մարզի Ձորագետ համայնքում, Կոտայքի մարզի Նոր Գեղի եւ Քաղսի համայնքներում, Շիրակի մարզի Աշոցք եւ Հառիճ համայնքներում, Վայոց ձորի մարզի Մալիշկա համայնքում եւ Տավուշի մարզի Ակնաղբյուր եւ Ծաղկավան համայնքներում: